



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆԻՍ, 2020

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 14

ՄԱՐԿՈՑ ԶԱՐՈՒԹԻՒՆԸ

Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին.

՝Աստուած չկայ՝, ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան.

չկայ մէկը որ բարին գործէ:

Տէրը երկինքէն կը նայի մարդոց.

տեսնելու համար թէ կա՞յ արդեօք իմաստուն մարդ մը,

որ Աստուծոյ կը դառնայ:

Ամէնքն ալ խտրորեցան եւ մոլութեանց գիրկը ինկան.

չկայ մէկը որ բարին գործէ. չկայ մէկը, ոչ իսկ մէկը:

Երբեք խելքի պիտի չգա՞ն

բոլոր անոնք՝ որոնք իմ ժողովուրդս կ'ուրեն, հացի պէս,

եւ Տիրոջ չեն աղօթեր:

Բայց յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մարնէ,

որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է:

Չարագործները աղքատին խորհուրդները կը հեզնեն,

բայց Տէրը ինքն է անոր ապաւէնը:

Ոհ տեսնէի Աստուծոյ ժողովուրդին փրկութիւնը,

որ Սիոնէն պիտի գայ:

Երբ Տէրը ետ դարձնէ գերի տարուած իր ժողովուրդը,

Յակոբի սերունդները պիտի ցնծան եւ ուրախանան:

ՇԱՐԱԿԱՆ ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:

ՕՐՈՒԲԱՆ ՆԻԺՈՐ



ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՐԵՄԻԱՅԻ

41 ԳԼՈՒԽ

ԳՈՂՈՂԻԱՆ ԿՐ ՄՊԱՆՆՈՒԻ (41:1-18)

Այնքան ճշմարիտ է իրաւացի է Սաղմոսին բառերը, երբ կ'ըսէ. *“Անմիտ մարդիկ իրենց միտքին մէջ ըսին. “Աստուած չկայ”, ուստի ապականեցան եւ զգուելի արարքներու մէջ ինկան. չկայ մէկը որ բարին գործէ”*: Այո, այնքան արեւն, որ մարդը ոչ թէ միայն Աստուծմէ հեռու է, այլ՝ առաւել էս կը շեշտէ ըսելով, թէ Աստուած չկայ, անխուսափելի են անոր արարքները: Այլ խօսքով, ընելու այն ինչ որ կ'ուզէ ընել: Երբ մարդ արարածին մտքէն, սրտէն, հոգիէն կը հանենք Աստուծոյ ներկայութեան հասկացողութիւնը, զգացումն, ու մանաւանդ՝ հաշուերութեան գիտակցութիւնը, մարդ արարածը ուրիշ բան չէ եթէ ոչ իր կիրքերով, ցանկութիւններով ու բնագող աստուծոյ, շարժող արարած: Մտքին եկածը, սրտին ուզածը ընելու է իր կիրքերն ու բնագող գոհացնելու համար:

Ահա այս երեւոյթը պարզող հապուած մըն է մեր այսօրուան հապուածը Երեմիայի մարգարէութեան 41 գլուխը: Միրելիներ, մենք յաճախ ունինք, կամ կ'ունենանք այնպիսի փայտորութիւն մը, որ Աստուածաշունչ Մարեանը կ'ընդունինք որպէս սուրբ ու սրբազան գիրք: Ճիշդ է. սուրբ ու սրբազան գիրք է, Աստուծոյ փրկութեան ծրագիրը ներկայացնող գիրք է: Միւս կողմէ, նաեւ, Աստուածաշունչը մարդը իր ամբողջ մտածողութեամբ պարկերացնող գիրք է, որուն համար է, որ նաեւ այդ փրկութեան ծրագիրը կայ: Անկեալ մարդը, մեղքի մէջ ինկած մարդը, ապականած ու զգուելի արարքներու մէջ եղող մարդը, որ կարիքը ունի փրկութեան: Ուստի, Աստուածաշունչ Մարեան մեզի կը ներակայացնէ մարդը իր իսկ իսկութեամբ, այնպէս ինչպէս որ կայ: Այս բոլորի պարճառը մարդու անմտութիւնն է, մարդը Աստուծմէ հեռու ըլլալու հանգամանքն է, որ զինք կ'առաջնորդէ դէպի անդունդ: Յաճախ նաեւ այնպիսի փայտորութիւն ունինք, որ այս անգամ այսպիսի մարդիկ կը մնան անպարիժ, բայց Սաղմոսերգուն, ինչպէս նաեւ մեր այսօրուան հապուածը յստակօրէն ցոյց կու տայ, թէ այդպէս չէ պարագան, հապա *“յանկարծակի՝ Տէրը զիրենք ահ ու դողի պիտի մարնէ, որովհետեւ Աստուած արդար մարդոց հետ է”*:

Երեմիայի 41 գլուխը կը ներկայացնէ Գողգոթիայի սպանութիւնը, որ Նաբուգոդոնոսորի կողմէ նշանակուած էր որպէս կառավարիչ: Յօհաննան գալով կու գայ լուռ կու փայ Գողգոթիային թէ Իսմայէլը կը ծրագրէ քեզ սպաննել, բայց Գողգոթիան չի հաւատարար ըսուածին: Բայց ահա հասաւ պահը երբ դէպքը կը պարահի եւ Գողգոթիան կը սպաննուի Իսմայէլի կողմէ: Բայց Իսմայէլի ըրած չարիքը նաեւ վերջ կ'ունենայ, երբ Յօհաննան գերի փարուած ժողովուրդը կ'ազատէ Իսմայէլի ձեռքէն:

Այսօր ալ, նոյն է պարագան երբ կոտորածի, սպաննութեան, անորոշութեան, խառնակ այս վիճակին մէջ, յաճախ կրնանք ունենալ յուսահապութեան պահեր ու այնպիսի մտածումներ, որ հարց կու տանք երբեմն թէ ինչո՞ւ այս բաները կը պարահին, ու մանաւանդ՝ ով հաշիւը պիտի տեսնէ այս բոլորին, բայց Աստուածաշունչը մեզի կը վստահեցնէ, որ պիտի գայ ժամանակը, եւ Աստուած զիրենք ահ ու դողի մարնէ, իսկ մենք ալ համբերութեամբ սպասենք Տիրոջ գալուստին: